

Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ №4 (33) 2017 Гуманитарные науки

ՀՏԴ 159.9 :37.091

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄՇԱԿՈՒՄ
Մ.Պ.ՄԿՐՏՈՒՄՅԱՆ, Լ.ՅՈՒ.ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

*Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարան, 0010, Երևան, Տիգրան Մեծի 17
e-mail: dr-mkrtumyan@mail.ru*

Ուսումնասիրվել են սովորողների հոգեբանական անվտանգության հիմնախնդրի դրվածքն ու սոցիալ-հոգեբանական, անձնային գործոնների ազդեցությունը անձի հոգեբանական անվտանգության կառուցվածքում: Հետազոտական ճանապարհով բացահայտվել են սովորողների տազնապայնության, սթրեսակայունության ու հոգեկան աշխատունակության դրսևորման առանձնահատկությունները: Բացասական փոփոխությունների կանխարգելման ու հոգեկան առողջության պահպանման նպատակով, մշակվել են սովորողների հոգեբանական անվտանգության ապահովման չափորոշիչների և հոգեբանական ուղեկցման մեթոդների համակարգ:

Բանալի բառեր. Հոգեբանական անվտանգություն, հարմարում, հուզական լարվածություն, գործառության վիճակ, հոգեկան կայունություն, հոգեկան աշխատունակություն:

Ներկայացված է խմբագրություն 17.11.2016.

Վերջին տասնամյակների համաշխարհային ռազմաքաղաքական, սոցիալ-տնտեսական զարգացումների պայմաններում շատ երկրներում, այդ թվում նաև ՀՀ-ում օրեցօր դժվարանում է անձի հոգեբանական անվտանգության ապահովման հիմնախնդիրը: Այդ նպատակով հոգեբանական գիտությունների համար առաջնային պլան է մղվում խնդրո առարկայի վերաբերյալ հիմնարար հետազոտությունների, նոր տեխնոլոգիաների մշակման անհրաժեշտությունը: Մասնագիտական գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ հոգեբանական անվտանգության խոցելիության առումով՝ առաջնային տեղ են զբաղեցնում դպրոցահասակ երեխաներն ու ԲՈՒՀ-երում սովորող ուսանողները[1,5,6,7,8]: Դա բացատրվում է նրանց սոցիալ-տնտեսական կախվածության վիճակով, ինքնուրույն կյանքի անհարմարություններով ու դժվարություններով, սովորողների ընդհանուր և հոգեկան առողջության խնդիրներով, սոցիալական փորձի պակասով և այլ դժվարություններով: Քաղաքային ապրելակերպի դժվարություններն ու դրանցում ինքնուրույն գործելու փորձի բացակայությունը, սովորողների կյանքում ձևավորում են տևական տազնապի, զգուշավորության, վախի վրա հիմնված վարքագիծ: Բնութագրական առումով՝ դա հոգեբանական անվտանգության կորստի վիճակ է[6,]: Այդ պատճառով՝ ուսումնական գործընթացում հաջողությունների ապահովումն ու սովորողների բազմակողմանի անվտանգության ապահովման գործընթացը պահանջում է բազմակողմանի ֆիզիկական և հոգեբանական պատրաստվածություն[2,3]:

Ընդհանուր ֆիզիկական պատրաստությունը հանդիսանում է անձի առողջության, նրա օրգանիզմի դիմադրողականության, ընդհանուր շարժունակության ու առողջ ապրելակերպի ապահովման պատվար: Ժամանակակից մարդու առօրյայում հետզհետե նվազող ֆիզիկական ծանրաբեռնվածությունը հանգեցնում է հիպոդինամիայի երևույթի առաջացման: Մեր ժամանակներում այն համարվում է դարի „հիվանդություն“: Օրգանիզմի մկանային հյուծվածությունը, գիրացումը, նյարդային, սիրտ-անոթային, հենաշարժական, գազափոխանակության, մարսողական համակարգերում դիտարկվող ժամանակակից հիվանդությունների ճնշող մեծամասնության գլխավոր պատճառը հենց հիպոդինամիան է [8 էջ 9]:

Սովորողների հոգեկան առողջության պահպանման հիմնախնդրի լուծման պահանջներից մեկն էլ առողջ ապրելակերպին ուղղված անձնային ռեժիմի կառուցումն է, որում մասնագետների կողմից հաշվի են առնվում մարդու սննդի, հանգստի, քնի, աշխատանքի ռեժիմի հոգեհիգիենայի կազմակերպման պահանջները: Դրանում առաջնային տեղ է զբաղեցնում անձի բազմակողմանի պատրաստվածության գործոնը (ֆիզիկական, մտավոր, սոցիալական հմտությունների ձևավորման, հոգեբանական և այլն), որը հանդիսանում է ամենատարբեր իրավիճակներում ինքնուրույն գործելու անձի ազատության հնարավորություն, վստահության և ապահովության զգացումների մշտական մարգավիճակ [2,3,7]: Սովորողների հոգեկան առողջության պահպանման գործընթացում առաջնային պլան է մղվում նաև հոգեբանական պատրաստության տեխնոլոգիաների ներդրման հիմնախնդիրը: Այդ նպատակով հոգեբանական պատրաստության գործընթացը իրականացվում է 3 ուղղություններով: Դրանք են. հոգեախտորոշումը, հոգեբանական կանխարգելումը, հոգեբանական ուղեկցումը և վերահսկողությունը [3]:

Սովորողների հոգեբանական անվտանգության հիմնախնդրի դրվածքի ուսումնասիրման նպատակով հետազոտվել են դպրոցականների և ԲՈՒՀ-երում սովորող երիտասարդների հոգեբանական անվտանգության անձնային առանձնահատկությունները, հուզականային, կոգնիտիվ գործընթացների հոգեֆիզիոլոգիական դրսևորումների յուրահատուկ բնութագրերը:

Աշխատանքի նպատակն է՝ սովորողների հոգեկան կայունության, հոգեկան աշխատունակության հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների հետազոտումը, և դրանց հիման վրա հոգեբանական անվտանգության ապահովման չափորոշիչ համակարգի մշակումը:

Հետազոտական աշխատանքներին մասնակցել են 11-17 տարեկան 50 դպրոցականներ և 17-23 տարեկան 50 ուսանողներ: Դպրոցականներին և ուսանողներին բաժանել ենք երկուական խմբերի: Արդյունքում ունեցել ենք 11-13, 14-17 տարեկան դպրոցական խմբեր և 17-20, ինչպես նաև 21-22 տարեկան ուսանողների խմբեր: Որպես աշխատանքում առաջադրված խնդիրներ՝ ուսումնասիրվել են սովորողների կամային ինքնակարգավորման առանձնահատկությունները, հոգեկան կայունության պահպանման, անհատական առանձնահատկությունների դրսևորման յուրահատկությունները, հոգեկան աշխատունակության, հոգեկան հուսալիության, սթրեսակայունության հոգեֆիզիոլոգիական հիմքերը, անձի պահեստային հնարավորությունների հոգեբանական նախադրյալները: Մշակվել են նաև տարբեր տարիքային խմբերում ընդգրկված դպրոցականների և ուսանողների հոգեբանական պատրաստության և ուղեկցման համակարգ, որը կենսագործունեության ամենատարբեր իրադրություններում հնարավորություն է տալիս սովորողներին հոգեբանական ապահովության, ինքնավստահության զգացումների կայուն վիճակի պահպանմանը:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ սովորողների բոլոր խմբերում ընդգրկված անձանց մոտ նկատվում է տագնապայնության բարձր մակարդակ:

Հոգեվիճակի արտահայտվածության այսպիսի բնութագիրը պայմանավորված է միջավայրում գոյություն ունեցող անհարմարություններով, սովորողների ինքնավստահության ցածր մակարդակով: Տագնապայնությունը Ջ. Թեյլորի կողմից միաժամանակ դիտարկվում է որպես անձնային առանձնահատկություն, որը կարող է ձևավորվել ուղեկցվող վախերի ազդեցությամբ[4]: Այս հանգամանքը ակամայից հուշում է այն միտքը, որ սովորողների վարքագծում տեղի ունեցող տեղաշարժերը, որոնք դրսևորվում են անկայուն հույզերով, բնավորության ակցենտավորմամբ, անձի հոգեբանական անվտանգության բնութագրերի փոփոխությամբ, պայմանավորված են սոցիալական պայմանների դժվարությունների, միջազգային լարվածության ու հավանական պատերազմի վերսկսման սպառնալիքների առկայության հանգամանքներով:

Դպրոցականների մոտ դա կապված է ինքնուրույնացման ճանապարհին ծնողների ու հարազատների հետ նրանց կողմից ունեցած կապերի աստիճանական թուլացման, միաժամանակ դեռևս միջավայրի պայմաններին հարմարված չլինելու, հասարակության մեջ դեռևս իրենց տեղը չլինելու հանգամանքներով, նրանց հոգեֆիզիոլոգիական հնարավորությունների ու միջավայրի պահանջների միջև գոյություն ունեցող հակասություններով և այլն: Ուսանողների մոտ այն պայմանավորված է ուսանողական կյանքի դժվարություններով ու անհարմարություններով, նրանց ժամանակի սղությամբ: Բարձր կուրսերում ու մագիստրատուրայում սովորողների բացասական ապրումները կապված են ավարտելուց հետո նրանց սպասող հավանական գործազրկության սպառնալիքի, ապագայի անհայտությունների հետ:

Տեսաշարժական (ՏՀՌԺ) հակազդման ժամանակի ցուցանիշը մասնագետների կողմից դիտարկվում է որպես անձի զգայաշարժական, կողմնորոշման, հենաշարժական համակարգերի ֆունկցիոնալ համագործակցության առանձնահատկություն, ինչպես նաև բարդ առաջադրանքներում հոգեկան համակարգության ինքնակառավարման կարողունակություն: [4,5,6]: Այդ ցուցանիշը միևնույն ժամանակ բնութագրում է անձի ներքին հավասարակշռվածությունը, կոմֆորտ վիճակն ու ինքնավստահությունը: Դրանք հանդիսանում են հոգեբանական ապահովվածության, հավակնությունների, նպատակների իրականացման պատրաստակամություն: Այսպես՝ մագիստրոսների խմբի համար ՏՀՌԺ-1-ի միջին ցուցանիշը կազմում է 196 ± 0.4 /վրկ.: Բակալավրիատում սովորող ուսանողներինը այդ տևողությունը կազմում է՝ 205 ± 1.0 մ/վրկ, որտեղ տարբերությունը ($P < 0.05$) վիճակագրորեն մեծ չէ: Այսպիսի ցուցանիշը պարզ հակազդման դեպքում, մասնագիտության պահանջների առումով, գոհացուցիչ չէ: Դեռահասների խմբի ՏՀՌԺ-1-ը կազմում է 201 ± 8.0 վրկ. ($P > 0.05$), պատանիներինը՝ 192 ± 4.5 ($P > 0.05$): Առաջադրանքի կատարման պահանջների դժվարեցման դեպքում, մագիստրանտների հակազդման ժամանակը հավաստի կերպով նվազում է: Նվազում են նաև նրանց թույլ տրված սխալները, որը կազմում է 2 ± 0.2 հատ: Բարդ գործողությունների կատարման հակազդման ժամանակը բակալավրիատում սովորող ուսանողների, ավագ դպրոցի պատանիների ու միջին դասարաններում սովորող դեռահասների խմբերում համապատասխանաբար կազմում է 214 ± 4.6 վրկ., 242 ± 8.0 վրկ. ($P < 0.05$) և 232 ± 2.2 վրկ. ($P < 0.05$): Բացատրելով տարբեր գրգռիչների նկատմամբ խմբերում ընդգրկված սովորողների հակազդման ժամանակի ցուցադրման մեխանիզմները, պետք է կարևորել նրանց ուշադրության առանձնահատկությունների դրսևորման բնութագրերը: Դրանցում առանձնակի կարևորվում են ուշադրության կենտրոնացման, ինտենսիվության տեղափոխման ծավալի և այլ առանձնահատկությունների գործառնական փոփոխությունները:

Պարզ և բարդ գործողությունների կատարման դեպքում հետազոտվողների ուշադրության կենտրոնացման, ներքին հնարավորությունների մոբիլիզացման, հոգեկան աշխատունակության փոփոխությունները չափվել են գրաֆիկական տեպայինգ-թեստի միջոցով: Հետազոտության ընթացքում մագիստրոսների թույլ տված սխալները

համեմատած բակալավրիատում սովորողների, ինչպես նաև դպրոցում սովորող պատանիների և դեռահասների՝ բակականին փոքր են (28 ± 0.6): Մագիստրոսների, բակալավրիատում սովորողների, դպրոցական պատանիների ու դեռահասների խմբերում թույլ տրված սխալների թիվը համապատասխանաբար կազմում են 34 ± 0.8 ($P < 0.01$), 31 ± 4.2 ($P < 0.001$), 32 ± 3.1 ($P < 0.01$):

Հետազոտության ընթացքում որպես հոգեկան աշխատունակության բնութագրեր՝ ուսումնասիրվել են նաև սովորողների մոբիլիզացիոն հնարավորությունների, մտավոր գործողությունների կատարման ինտենսիվության, հստակության, ինքավերահսկողության առանձնահատկությունները: Չափման արդյունքում միջնորդավորված կերպով արտահայտված են հետազոտվողների գգուշավորությունը, անհաջողության նկատմամբ՝ նաև անհանգստությունը, տագնապն ու վախը և այլն (դա արտահայտվում էր նաև նրանց բանավոր խոսքում): Ավելի բարդ խնդիրների առաջադրման դեպքում՝ սովորողների գրաֆիկական տեպինգի ցուցադրած արդյունքներում ցուցանիշները աճել են: Երկրորդ փորձի ձեռնարկման ժամանակ մագիստրոսների ցուցանիշները 53 ± 0.8 վրկ.-ից հասցվել են մինչև 56 ± 0.9 վրկ. ($P < 0.001$): Միննույն ժամանակ, բակալավրիատում սովորողները իրենց ցուցանիշները 42 ± 2.4 վրկ.-ից նվազեցնելով հասցրել են 40 ± 4.1 վրկ.-ի, պատանիները 47 ± 2.1 վրկ.-ից 44 ± 4.6 վրկ.-ի ($P < 0.01$), դեռահասների խմբում՝ 52 ± 1.3 վրկ. - ից մինչև 49 ± 4.6 վրկ. ($P < 0.01$):


Հոգեկան աշխատունակության ցուցանիշների վերլուծության արդյունքներում պարզվել է, որ մագիստրոսները ութ զույգ կարմիր և սև թվերի որոնման վրա ծախսել են 69 ± 1.5 վրկ.՝ միննույն ժամանակ թույլ տալով 3 ± 0.2 սխալներ: Բակալավրիատի ուսանողները 8 զույգ թվերի որոնման համար ծախսել են 79 ± 2.1 վրկ. ժամանակ, կատարելով 6 ± 0.5 սխալներ ($P < 0.001$): Ուսանողների ժամանակի կորուստը և թույլ տված սխալները խոսում են նրանց ուշադրության կենտրոնացման, տեղափոխման գործընթացների ցածր արդյունավետության մասին:

Հետազոտվողների հոգեկան աշխատունակության, անձի տագնապայնության և խառնվածքի ուսումնասիրության արդյունքների համեմատությամբ ցույց է տալիս, որ հետազոտվող խմբերում անձնային տագնապայնության բարձր և բարձրի միտում ունեցող ցուցանիշները գերակշռում են ինտրովերտների խմբում: Բարձր և բարձրի միտումով տագնապայնությունը գերակշռում է էքստրավերտների մոտ: Մթերսում նյարդահոգեկան կայունության և անհարմարվողականության ռիսկի ուսումնասիրության արդյունքներում նյարդահոգեկան անկայունության և անհարմարվողականության ռիսկի ցուցանիշները գերակշռում են էքստրավերտների մոտ: Նյարդահոգեկան անկայունության և անհարմարվողականության ռիսկի ցուցանիշները ինտրովերտների և էքստրավերտների մոտ գրեթե հավասար են: Սակայն ինչպես ցույց են տալիս վերլուծության արդյունքները նյարդահոգեկան կայունության ցուցանիշները գերակշռում են էքստրավերտների խմբում:

Այսպիսով՝ որպես հետևություն՝ կարելի է ասել, որ հետազոտության խմբերում ընդգրկված անձանց բարձր տագնապայնության, նյարդահոգեկան անկայունության, ներոտիզացման ցուցանիշները դրսևորվում են խառնվածքի տիպից անկախ: Տվյալ դեպքում՝ դրանք պայմանավորված են ուսումնական գործունեության մեջ գոյություն ունեցող օբեկտիվ և սուբեկտիվ անբարենպաստ գործոններով:


Հետազոտության արդյունքների ամփոփման հիման վրա մշակված հոգեճանաչման մեթոդների մարտկոցը առաջադրվում է որպես սովորողների հոգեբանական անվտանգության բնութագրերի չափորոշիչ համակարգ: Համակարգի արդյունավետությունն ու կիրառականությունը ամրակայվում է ստացված արդյունքների հավաստիությամբ և վիճակագրական տվյալների ճշգրտությամբ: Մշակվել են նաև հոգեբանական հնարքների, վերականգնողական ֆիզիկական վարժությունների մատչելի համալիր, որոնցով շարունակական մարզումների դեպքում հնարավորություն է

ստեղծվում զգալիորեն ամրապնդել սովորողների հոգեբանական անվտանգության զգացումը: Թիվ 1 նկարում ներկայացված է մշակված վարժությունների համալիրը:



Նկ.1 Ֆիզիկական վարժությունների կատարման հերթականությունը:

Վարժությունների կատարման սկիզբը սկսվում է նկարի ձախ հատվածում ուրվագծված ծնկած դիրքում գտնվող անձնավորության մեկնարկով, որը առավելագույն արագությամբ պետք է հաղթահարի վարժությունների համալիրի դժվարությունները: Համալիրի կատարման ուղղությունը իրականացվում է ժամացույցի սլաքի պտտման ուղղությամբ: Համարձակության, ինքնուրույնության, իր ուժերի նկատմամբ վստահության ձևավորման, ինչպես նաև հոգեբանական կոփման նպատակով՝ վարժությունների կատարման դժվարացմամբ ստեղծվում են նաև տարբեր բնույթի „վթարային“, իրադրություններ (հրդեհների, պայթյունների, հատակի ցնցումների ու հզոր տատանումների և այլ ձևերով): Դրանցում համալրված են բարդ վարժություններ, որոնց կատարման ընթացքում մասնակիցներից պահանջվում են համարձակության, ռիսկի, սեփական վախերի ինքնահաղթահարման մեծ ճիգեր: Վտանգավոր իրադրությունների մոդելավորման գործընթացում հաղթահարվում են նաև անակընկալ պատահարների, դեպքերի հետ կապված վախերը, սեփական հնարավորությունների նկատմամբ կասկածներն ու նյարդային լարվածությունը: Հաջորդ փուլում իրականացվում է գործողությունների առանձին տարրերի, բարդ վարժությունների կատարման ողջ ընթացքը (նկ.2):



Նկ. Մոդելավորված գործողությունների մտաշարժական վարժանքների սխեման:

Մտաշարժական վարժանքներում կինոժապավենի պես իրար են հաջորդում գործողությունների մտովի կրկնությունները, պահպանելով դրանց պատկերացումների

հերթականությունը, կառուցվածքը, գործողությունների կատարման սկիզբը, ընթացքը, ավարտ հանդիսացող հանգուցային մասերը և այլն: Մտաշարժական ակտերի ժամանակ սովորողների հոգեկան համակարգում ձևավորվում են վարժության կառուցվածքի մտավոր մոդելները: Դրանց մտաշարժական կատարման մաքրությամբ պայմանավորված են գործնական կյանքում դրանց կիրառման բոլոր պահանջները: Մտաշարժական գործողություններում հղկվում են բազմաթիվ գործնական կարողություններ ու հմտություններ, որոնցից ավելի շատ կիրառական նշանակություն ունեցող հմտությունները ներկայացվում են:

1. մասնագիտական գործողությունների իդեալական մտապատկերումներ,
2. վտանգների, հավանական խափանումների հստակ մտապատկերներ,
3. գործողությունների սկզբնական, ավարտի, հանգուցային մասերի մտապատկերման, դրանց ընթացքի վերահսկման հմտություններ,
4. անբարենպաստ հոգեվիճակների կառավարման, լավագույն աշխատանքային վիճակի ձևավորման և այլ հմտություններ,
5. հավանական վնասվածքների, սխալ գործողությունների կատարման, խափանումների կանխարգելման հմտություններ,
6. գործողությունների, առանձին տարրերի իրականացման համար ներքին էներգիայի հավասարաչափ բաշխման կարողունակություններ,
7. դեպքերի հավանական զարգացումների կռահման, դրանց կանխատեսման ու վթարների կանխարգելման հմտություններ,
8. թիմային գործողություններում անհամաձայնության, հավանական կոնֆլիկտների, տարաձայնությունների կանխարգելման հմտություններ, ոչ ստանդարտ իրավիճակներում, վտանգի ժամանակ գործողությունների կատարման պատասխանատվության ստանձման կարողություններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արամյան Լ. Յու. Ժամանակակից մարտահրավերների հոգեբանական ազդեցության յուրահատկությունները: Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ: Եր.: «Զանգակ-97» հրատ., 2010թ. թիվ 3(9) (էջ 17_24):
2. Громбах С. В. Школа и психическое здоровье учащегося. М.: Медицина, 1988, 272 стр.
3. Коттик М. А. Психология и безопасность. Таллин: Валгус. 1989, 463 стр.
4. Малкина–Пых И. Г. Экстремальные ситуации. М.: Эксмо, 2006. 960 стр.
5. Пиккенхайн Л. Нейрофизиологические механизмы идеомоторной тренировки. Вопросы физиологии, М. 1980, с.163, 161-170 стр.
6. Մկրտումյան Մ. Պ. Արտակարգ իրավիճակների հոգեբանության կանխարգելման և վերականգնողական հիմնախնդիրները: Ուսումնական ձեռնարկ, Զանգակ-97, Եր. 2008թ., էջ 52.
7. Алексеев А.В. Себя преодолеть. М.: Фис. 1985. с.9, 221стр.
8. .Рождественская М. Н. Индивидуальные различия работоспособности. М.: Педагогика, 1980. с.93, 179стр.
9. Մկրտումյան Մ. Պ. Ժամանակակից մարտահրավերներին անձի հակազդման հոգեբանական առանձնահատկությունները: Բանբեր Երևանի համալս. Փիլիսոփայություն, հոգեբանություն Եր.: 2010թ. թիվ 131.4 (էջ 44-49).

РЕЗЮМЕ
РАЗРАБОТКА СИСТЕМЫ КРИТЕРИЕВ ОБЕСПЕЧЕНИЯ ПСИХОЛОГИЧЕСКОЙ
БЕЗОПАСНОСТИ УЧАЩИХСЯ
М.П. МКРТУМЯН, Л.Ю. МКРТУМЯН

В статье обсуждаются постановка проблемы обеспечения психологической безопасности учащихся и влияние социально-психологических, личностных факторов в структуре психологической безопасности личности. Экспериментальным путем выявлены особенности проявления тревожности, стрессоустойчивости и психологической безопасности учащихся. С целью профилактики возможных негативных изменений и сохранению психического здоровья учащихся, разработаны критерии обеспечения психологической безопасности и система методов психологического сопровождения.

SUMMARY
ELABORATION OF THE CRITERIA SYSTEM SUPPORT IN THE PSYCHOLOGICAL SECURITY
OF THE STUDENTS
M. MKRTUMYAN, L. MKRTUMYAN

The article reveals the problems of support of psychological security of the students and the influence of social-psychological, self-factors in the structure of psychological security of the person. Peculiarities of the anxiety of a person, stress stability and psychological security of the students are introduced here by means of the experiment. The elaboration of criteria of all possible negative transferences and to support the psychological security of the students a special system of modes have been worked out.